ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «29» հոկտեմբերի 2012 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 32-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԱԺԻՆՆԵՐ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13- Ի N 01-Ա ՀՐԱՄԱՆԻ ՈՐՈՇ ԵՆԹԱԿԵՏԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ի N 863-Ն որոշումը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի «գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական կադրերի պլանավորման, որակավորման և հետազոտությունների աջակցության բաժինը» վերանվանել «գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական ծրագրերի իրականացման աջակցության բաժնի», «գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական փորձաքննության բաժինը»՝ «գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի», «գիտական գործունեության կազմակերպման վարչության միջազգային համագործակցության և իրավական հարցերի բաժինը»՝

«գիտական գործունեության կազմակերպման վարչության միջազգային համագործակցության բաժնի», «գիտական քաղաքականության վարչության ինովացիոն և ներդրումային քաղաքականության բաժինը»՝ «գիտական քաղաքականության վարչության գիտական արդյունքի առևտրայնացման և ինովացիոն ծրագրերի բաժնի»:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2008 թվականի փետրվարի 13-ի N 01-Ա հրամանի 1-ին կետի «ինովացիոն և ներդրումային քաղաքականության բաժին», 2-րդ կետի «գիտական կադրերի պլանավորման, որակավորման և հետազոտությունների աջակցության բաժին», «գիտական փորձաքննության բաժին», «միջազգային համագործակցության և իրավական հարցերի բաժին» ենթակետերը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ